Հայոց լեզվի և գրականության, մաթեմատիկայի, բնագիտության

2025 թվականի առարկայական քննության գնահատման սխեմա

(I – IV դասարաններ)

Հայոց լեզու և գրականություն

1	բ
2	դ
3	դ

4	**Առավելագույն միավորը՝ 6**	
	Առաջադրանքում **4** սխալ կա.	
	Սխալ	**Պետք է լինի**
	պսակով էր զարդարել դպրոցի բակի ծառերին	պսակով էր զարդարել դպրոցի բակի ծառերը
	մեծամասնությունը հավաքվել էին	մեծամասնությունը հավաքվել էր
	նրան՝ որպես լավագույն շրջանավարտ,	նրան՝ որպես լավագույն շրջանավարտի,
	իր երբեմնի աշակերտը չէր այցելել նրան	իր երբեմնի աշակերտը չէր այցելել իրեն

Սխալը գտնելը

- Դիմորդը սխալներից յուրաքանչյուրն **ուղղելու դեպքում ստանում է մեկական պլյուս «+»:**

Սխալը բացատրել-հիմնավորելը

- Յուրաքանչյուր սխալ ճիշտ և **լիարժեքորեն բացատրել-հիմնավորելու դեպքում դիմորդը ստանում է երկու պլյուս «++»**:

- Յուրաքանչյուր սխալ **մասնակիորեն** ճիշտ / ոչ լիարժեքորեն բացատրել-հիմնավորելու դեպքում դիմորդը ստանում է **մեկ պլյուս «+»:**

++ Սխալը կապված է բայի խնդրառության հետ: «Զարդարել»-ը ներգործական սեռի բայ է, պահանջում է հայցական հոլովով դրված ուղիղ խնդիր լրացում: Զարդարել ո՞ւմ, ի՞նչը:
++ Սխալը կապված է ենթակայի և ստորոգյալի համաձայնության հետ: «Մեծամասնությունը» հավաքական գոյական անուն է, նախադասության մեջ գործածվել է որպես ենթակա և պահանջում է եզակի թվով ստորոգյալ:
++ Սխալը կապված է մասնական բացահայտիչ-բացահայտյալի համաձայնության հետ: «Նրան» տրական հոլովով դրված բացահայտյալը պահանջում է տրական հոլովով դրված բացահայտիչ:

++ «Նրան»-ը և «իրեն»-ը երրորդ դեմքի անձնական դերանուններ են: Այս դեպքում պետք է լինի «իրեն», քանի որ գործողությունը հանգում է գործող անձին՝ ուսուցչին:

Ճիշտ գրված բառը սխալ ձևով ուղղելու դեպքում

- Ճիշտ գրված բառերից յուրաքանչյուրը սխալ ձևով ուղղելու դեպքում դիմորդի ստացած պլյուսերի քանակը յուրաքանչյուր դեպքում **կնվազի մեկական պլյուսով**:

Արդյունքում դիմորդը կարող է հավաքել 12 «+»:
Աշխատանքը կգնահատվի հավաքած պլյուսերի ընդհանուր քանակի համաձայն:

Պլյուսերի քանակ	Գնահատում
11-12	6 միավոր
9-10	5 միավոր
7-8	4 միավոր
5-6	3 միավոր
3-4	2 միավոր
1-2	1 միավոր

5	**Առավելագույն միավորը՝ 2**
	2 միավոր. Դիմորդը սխալը գտել և ուղղել է՝ առանց առաջադրանքում տրված նախադասության բովանդակությունը և կազմությունը փոխելու. ✓ Վրաստանում «Զարթոնք» անունն էր կրում նրանց հիմնած ամառային ճամբարը, որը գտնվում էր Սաղամո լճի ափին: ✓ Վրաստանում նրանց հիմնած ամառային ճամբարը, որը գտնվում էր Սաղամո լճի ափին, «Զարթոնք» անունն էր կրում: Բերված է լիարժեք բացատրություն: Դիմորդը մասնագիտական բառապաշարի կիրառությամբ հիմնավորել է, որ որոշիչ երկրորդական նախադասությունը *(որը գտնվում էր Սաղամո լճի ափին)* պետք է անմիջապես հաջորդի գլխավոր նախադասության որոշյալ անդամին *(ճամբարը)*:
	1 միավոր. • Դիմորդը գտել / ուղղել է սխալը, սակայն չի կարողացել բացատրել / ճիշտ չի բացատրել սխալի պատճառը: **0 միավոր.** Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը. • Դիմորդը ճիշտ չի նշել և չի բացատրել սխալը: • Դիմորդը չի պատասխանել հարցին:

6.1	Բ
6.2	Բ

6.3	**Առավելագույն միավորը՝ 2**
	2 միավոր. Դատողությունը ճիշտ է, համոզիչ ու հստակ ձևակերպված: Բացահայտված և պատշաճորեն բացատրված է հերոսի (Էլլիի) ասելիքը: Դիմորդի պատասխանում պարզ երևում են. Էլլիի՝ ուրիշներից տարբեր լինելու պատճառով հրահրված ապրումները / Էլլիի ասելիքը՝ պայմանավորված նրա անհատականության նկատմամբ համադասարանցիների և ուսուցիչների բացասական վերաբերմունքով: **1 միավոր.** Դիմորդը ճիշտ է ըմբռնել հերոսի (Էլլիի) ասելիքը, սակայն ներկայացված դատողությունը մակերեսային է և սխեմատիկ, դիմորդը սահմանափակվել է 2-3 բառով: **0 միավոր.** **Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.** • Դիմորդը սխալ է ըմբռնել հերոսի (Էլլիի) ասելիքը: • Դիմորդը չի պատասխանել հարցին:
6.4	**Առավելագույն միավորը՝ 2**
	2 միավոր. Դատողությունը ճիշտ է, համոզիչ ու հստակ ձևակերպված: Բացահայտված և պատշաճորեն բացատրված է հերոսի (միստր Դենիելսի) դիրքորոշումը: Դիմորդը ըմբռնել է, որ միստր Դենիելսն արժևորում է տարբերության ընդունելիությունը, հանդուրժողականությունը, բազմազանությունը, անհատականությունը, և Էլլիի՝ մյուսներից տարբերվելու առանձնահատկությունը դասընկերների համար նշված ունակությունները / մոտեցումը զարգացնելու հնարավորություն է: Միաժամանակ դիմորդը խոսում է միստր Դենիելսի մեթոդական դիրքորոշման մասին: **1 միավոր.** **Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.** • Դիմորդը ճիշտ է ըմբռնել հերոսի (միստր Դենիելսի) դիրքորոշումը (թե ինչ նկատի ունի բերված նախադասությամբ), պատասխանում երևում է միստր Դենիելսի մեթոդական դիրքորոշման ասպեկտը, սակայն ներկայացված դատողությունը մակերեսային է և սխեմատիկ: • Դատողությունը լավ է ձևակերպված, համոզիչ է, սակայն առաջադրանքի

	պայմանի մասերից միայն մեկին է անդրադառնում: **0 միավոր.** **Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.** • Դիմորդը սխալ է մեկնաբանել հերոսի (միստր Դենիելսի) վերաբերմունքը: • Բերված է ընդհանուր դատողություն. այս նախադասության մեջ երևում են Էլլիի կարևոր / առանձնահատուկ լինելը և սրա հետ կապված այլ հատկանիշներ: • Դիմորդը չի պատասխանել հարցին:

7.1	**Առավելագույն միավորը՝ 2**
	2 միավոր. Բերված է ճիշտ, համոզիչ, հստակ ձևակերպված դատողություն, դիմորդը ընտրել է համեմատություններից մեկը, բացատրել է դրա գեղարվեստական գործառույթը բանաստեղծության մեջ: **1 միավոր.** Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը. • Համեմատության ենթատեքստը ճիշտ է ըմբռնել, սակայն չի բացատրել նրա գեղարվեստական գործառույթը բանաստեղծության մեջ: • Համեմատության ենթատեքստը ճիշտ է ըմբռնել, սակայն մակերեսորեն և ընդհանուր առմամբ է ներկայացրել նրա գեղարվեստական գործառույթը: **0 միավոր.** Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը. • Համեմատությունը ճիշտ չի ըմբռնել / դատողությունը սխալ է: • Դիմորդը չի պատասխանել հարցին:
7.2	**Առավելագույն միավորը՝ 2**
	2 միավոր. Դատողությունը ճիշտ է, համոզիչ և հետևողականորեն ձևակերպված: Դիմորդը բացատրել է բանաստեղծի գլխավոր ասելիքը: Բանաստեղծության մեջ երևում է աշխարհի և մարդկանց նկատմամբ հեղինակի վերաբերմունքը՝ պայմանավորված նրա անկեղծությամբ: Այդ վերաբերմունքը միատեսակ / միանման է ամենքի ու ամեն ինչի հանդեպ, թեև նույն անկեղծությունը ստիպում է նրան անզիջող ու անտարբեր լինել այն ամենի նկատմամբ, ինչը / ով անընդունելի է իր համար: Դիմորդն ընդհանրացրել է բանաստեղծության մեջ վերհանված խնդիրը:

	1 միավոր. Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը. Դիմորդը ճիշտ է ըմբռնել բանաստեղծի գլխավոր ասելիքը, սակայն դատողությունը մակերեսորեն է ներկայացված / չի ընդհանրացվել / դիմորդը սահմանափակվել է 2-3 բառով: **0 միավոր.** Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը. Դիմորդը ճիշտ չի ըմբռնել բանաստեղծի գլխավոր ասելիքը / դատողությունը սխալ է: Դիմորդը չի պատասխանել հարցին:

Առավելագույն միավորը՝ 9
I. Բովանդակության համապատասխանություն*

Աշխատանքը համապատասխանում է տրված խնդրին և պատասխանում է առաջադրված հարցերին:

1 միավոր.

Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.

- Աշխատանքը բավարարում է առաջադրանքի պահանջները, չի անդրադառնում անհամապատասխան հարցերի:
- Աշխատանքը բավարարում է առաջադրանքի պահանջները, թեև ներառում է նաև անհամապատասխան տեղեկություններ:

0 միավոր.

Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.

- Աշխատանքը չի բավարարում առաջադրանքի պահանջները:
- Աշխատանքն անդրադառնում է միանգամայն այլ խնդրի:
- Աշխատանքը առաջադրանքի շրջասությունն է:
- *Աշխատանքի միայն փոքր մասն է անդրադառնում տրված թեմային, բայց չի բավարարում առաջադրանքի պահանջները:*

Եթե աշխատանքն առաջին չափանիշով գնահատվի 0 միավորով, ապա մյուս չափանիշներով այն այլևս չի գնահատվի:

II. Հիմնավորում *

Աշխատանքում հեղինակի դիրքորոշումը ներկայացված է համապատասխան հիմնավորմամբ, դատողությունը ամրապնդված է համոզիչ, համարժեք փաստարկներով և օրինակներով:

2 միավոր.

Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.

Դատողությունը հետևողական է, ինքնատիպ փաստարկները և օրինակները բերված են ինչպես ընտրված դիրքորոշումը հիմնավորելու, այնպես էլ հակառակ կարծիքը քննադատաբար գնահատելու համար:

1 միավոր.

Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.

Դատողությունը հետևողական է, ինքնատիպ փաստարկները և օրինակները բերված են կա՛մ ընտրված դիրքորոշումը հիմնավորելու, կա՛մ էլ հակառակ կարծիքը քննադատաբար գնահատելու համար:

Դիմորդը փորձում է դատողություն անել առաջադրանքի պահանջի շուրջ, ընտրված դիրքորոշումը հիմնավորելու կամ հակառակ կարծիքը քննադատաբար գնահատելու համար բերված փաստարկները և օրինակները մակերեսային են, միապաղաղ ու անհամոզիչ:

0 միավոր.

Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.

Դիմորդը փորձում է դատողություն անել առաջադրանքի պահանջի շուրջ առանց համապատասխան փաստարկների և օրինակների:

Դատողությունը տրամաբանական, հետևողական չէ: Կարծիքները չեն ամրապնդվում օրինակներով և փաստարկներով, կամ օրինակները և փաստարկները համարժեք չեն:

Դատողությունը տրված չէ:

** <u>Դատողություն անելիս փաստացի սխալ թույլ տալու դեպքում երկրորդ մասում դիմորդից կհանվի 1 միավոր:</u>*

III. Շարադրանքի կազմակերպում

Աշխատանքը կառուցվածքային առումով ճիշտ է, կարծիքները համակարգված են, հետևողականորեն ձևակերպված, շարադրանքի մասերը տրամաբանորեն կապված են միմյանց:

2 միավոր.

- Տեքստը կառուցվածքային առումով ճիշտ է, գրվածքում պարզորոշ երևում են

հարցադրումը, քննարկումը, եզրակացությունը: Կարծիքները ներկայացվում են հաջորդականությամբ, հատվածները տրամաբանորեն կապված են միմյանց: Պարբերությունները բաժանված են տրամաբանորեն:

1 միավոր.

Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.

- Հստակորեն ներկայացված են տեքստի միայն երկու կառուցվածքային մասերը:
- Տեքստի որոշ հատվածներ տրամաբանորեն չեն կապվում առաջադրանքի պայմանին:
- Մեկ-երկու դրվագ դուրս են մնացել շարադրանքի կառուցվածքից:
- Տրված եզրակացությունը հստակորեն / ուղղակիորեն չի վերաբերում առաջադրանքի պայմանում առաջադրված հարցին / չի բխում դատողությունից:
- Նույն միտքը կրկնվում է առանց որոշակի գործառույթի, առանց բեռնվածության:
- Աշխատանքը չի բաժանված պարբերությունների, կամ պարբերությունները տրամաբանական չեն:

0 միավոր.

Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.

- Գրվածքի միայն փոքր հատվածն է հատկացված դատողությանը (մի քանի նախադասություն, փոքր պարբերություն և այլն):
- Կարծիքները, տեքստի մեծ մասը միմյանց և առաջադրանքի պայմանին տրամաբանորեն չեն կապվում:
- Գրվածքում ներկայացված է տեքստի միայն մեկ կառուցվածքային մասը:
- Խնդիրն ընկալված է, բացահայտված է 1-2 նախադասությամբ, սակայն աշխատանքում չի երևում քննարկման համար տրված / վերհանված հարցը:
- Մի քանի դրվագներ դուրս են մնացել կառուցվածքից:

IV. Ոճ, բառապաշար

Կարծիքները պարզ են, հստակ, գրվածքի բառապաշարը հարուստ է, ոճական առումով՝ ճիշտ, կիրառված բառերը համապատասխանում են առաջադրված հարցին:

2 միավոր.

- Աշխատանքում մեկ-երկու աննշան ոճական թերություններ կան, տեքստի բառապաշարը հարուստ է, կարծիքը ճիշտ և հստակ է ձևակերպված, կիրառված բառերը և ոճը համապատասխանում են հարցին:

1 միավոր.

Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.

- Աշխատանքում մի քանի ոճական թերություններ կան, կիրառված բառապաշարը և ոճը հիմնականում համապատասխանում են հարցին:
- Գրվածքի բառապաշարն աղքատ է, թեև կիրառված բառերը ու ոճը հիմնականում համապատասխանում են հարցին:

0 միավոր.

Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.

- Գրվածքի բառապաշարն աղքատ է:
- Գրվածքում ոճական թերություններ կան:
- Աշխատանքում որոշակի հատվածներ ոճական առումով սխալ են:
- Կիրառված է ոչ համարժեք բառապաշար / ոճ:

V. Շարահյուսություն, ձևաբանություն, կետադրություն

Աշխատանքը կատարված է ժամանակակից գրական հայերենի նորմերի պահպանությամբ:

2 միավոր.

- Թույլ են տրված **մեկ-երկու** ուղղագրական-ձևաբանական / կետադրական սխալներ, շարահյուսական սխալներ **չեն արվել,** պահպանված են ժամանակակից գրական հայերենի նորմերը:

1 միավոր.

- **Թույլ են տրված հինգից ոչ ավելի** շարահյուսական, ուղղագրական-ձևաբանական և կետադրական սխալներ:

0 միավոր.

- **Թույլ են տրված վեց և ավելի** շարահյուսական / ուղղագրական-ձևաբանական / կետադրական սխալներ, աշխատանքում խախտված են ժամանակակից գրական հայերենի նորմերը:

Աշխատանքը չի գնահատվի, եթե.

Կատարված է ստորև տրված պայմաններից մեկը.

- Ներառում է տեղեկատվություն, որի միջոցով հնարավոր է նույնականացնել դիմորդի անձը՝ անունը և ազգանունը (իրական կամ հորինված), կեղծանունը, ստորագրությունը և այլն:
- Ձեռագիրն անընթեռնելի է:

Աշխատանքը պետք է պարունակի առնվազն 120 բառ: Այլ դեպքում այն կգնահատվի միայն I և II չափանիշների համաձայն:
Նկատի՛ ունեցեք. ➢ Ճիշտ պատասխանի հետ սխալ պատասխանը նշելու դեպքում դիմորդը կգնահատվի 0 միավորով: ➢ *Հայոց լեզվի և գրականության բաժնում* առաջադրանքները կատարելիս ժամանակակից գրական հայերենի նորմերը չպահպանելու դեպքում, աշխատանքը գնահատելիս դիմորդի գնահատականը կնվազի 1 միավորով: